

Հիշատակ - Հրէի մայրաքաղաք

15678

493

31.01.2007

Խ Ա Ռ Կ Ա Ն Ք



ՄԱՅԻՍ 28-Ի ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԵՒ
ԵՌԱԳՈՅՆ ԴՐՕՇԻ ՇՈՒՐԶ

Գրեց՝ ՀԱՅԿ ԽՕՃԱՍՍՐԵԱՆ



ՏՊԱՐԱՆ «ՊԱՅՖԱՐ»Ի

ՊՈՍԹՈՆ

1933

9(47.925)

Խ - 68

947.925)
Խ-68

05 OCT 2011

Խ Ա Բ Կ Ա Ն Ք

ՄԱՅԻՍ 28-Ի ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՌԱԳՈՅՆ ԴՐՕՇԻ ՇՈՒՐՁ

Կ'երեւայ որ եռադոյն դրօշի ցաւոտ հարցը իր
այժմէութիւնը դեռ չէ կորսնցուցած:

Պր. Ա. Միքայէլեան «Հայրենիք» օրաթերթի մէջ,
Մայիս 28-ի անկախութեան եւ եռադոյն դրօշի առթիւ
նախապէս գրած երկու յօդուածներէ վերջ, դեռ նոր
նոր, ի պատասխան Պր. Պոյաճեանի, չորս յօդուած-
ներ ալ հրատարակեց նոյն նիւթերու շուրջ:

Պր. Ա. Միքայէլեանի տեսութեամբ, Մայիս 28ը՝
մեր դարաւոր ստրկութեան խորտակման վառաշուք
օրն է, եւ թէ եռադոյնն ալ՝ պատմական շրջաններու
մէջ նուիրագործուած ազգային դրօշը, խորհրդանը-
շան՝ Միացեալ, Ազատ եւ Անկախ Հայաստանի:

Յօդուածագրի այս հաւաստումները եթէ անկեղծ
են, պարզապէս վրդովեցուցիչ ինքնախաբէութեան մը
արդիւնքը ըլլալ կը թուին:

Պր. Միքայէլեան՝ ըլլալով մին դաշնակցական ծա-
նօթ դէմքերէն, անշուշտ իրազեկ է այն ցաւագին պայ-
մաններուն, որոնք յառաջ բերին Մայիս 28-ի անուա-
նական անկախութիւնը:

Իրաւունք ունիմ երկբայելու որ իր գեղեցիկ խօս-
քերը հարազատ արտայայտութիւնը չեն իր եւ գիտա-
կից դաշնակցականներու սեփական համոզման: Ոսօքս
տղերց համար չէ. այդ կուսակցութեան մեծագոյն յա-
ջողութիւնն է շարքերուն մտքին տալ, իր դարբնած
խորհուրդներուն ծալքը ու ձեւը: Ինչ որ շէֆերը չեն

87951

հաւատար, սպերց համար կը դառնայ անխորտակելի հաւատք մը:

Պատմական ստուգութիւն մըն է այլեւս, թէ Մայիս 28-ին հռչակուած անկախութիւնը, թուրք դիւանագիտութեան դիւալին սադրանքն էր, իր կողմէ պարտադրուած, պարզապէս Անդրկովկասը մեծ Ռուսիայէն անջատելով, իր սպառազայ նուաճումները անարգել օրինականացնելու համար:

Այս ձեւական անկախութեան իսկական արժէքը յայտնաբերելու համար, պէտք կը գրամ վերստին թղթատելու հայ հանրապետութեան նախկին դաշնակցական նախարար Պր. Ս. Վրացեանի «Հայաստանի Հանրապետութիւն» գործը:

Այս ստուար հատորը 1928-ին հրատարակուած է Ամերիկայի դաշնակցական Կեդր. Վարչութեան ծախքով:

Անշուշտ միամտութիւն պիտի ըլլար մեզ համար դաշնակցական յայտնի գործիչի մը այս պատմական երկին մէջ, ժամանակակից բախտորոշ դէպքերու եւ դէմքերու տարերային վերլուծման առթիւ, գիտական եւ քննական անկաշկանդ ոգի եւ ուղղութիւն որոնել:

Կուսակցական հայեցակէտէ դիտուած է ամէն բան: Դաշնակցական յայտնի եւ անյայտ դէմքեր անմահացած են հերոսական գործերով, մինչդեռ Զօր. Անդրանիկ եւ Պօղոս Նուպար՝ անչքացած:

Հակառակ հեղինակին ակնյայտնի կողմնակալ ոգւոյն, քաղաքական դէպքերու դասակարգման մէջ, թէեւ սքօղուած, ճշմարտութիւններ կան, որոնք գլաւի կը դարձնեն իրական պատմութիւնը, մերկացնելով զայն կեղծիքի քօղէն:

Պր. Վրացեանի հաւաստումները եւ վկայութիւնները արժեցնելու համար, հարկ է նախ թուուցիկ ակնարկ մը նետել Հայկական Խորհրդի ծագման եւ զար-

գացման փուլերուն վրայ, մինչեւ Մայիս 28-ի անկախութեան հռչակման թուականը:

Հայ ցեղին համար ազատագրութեան պայքարը դարաւոր գոյութիւն ունի. յեղափոխական մարզի մէջ ուղիորէն հոսած արիւնը, դիւանագիտական մարզի մէջ թափուած դերազօր ջանքերը չեն կրցած սակայն իրականացնել մեր ազատագրութիւնը: Նոյնպէս զանազան շրջաններու մէջ պետական դաշնագիրներով նուիրագործուած հայաբնակ նահանգներու բարեկարգութեան ծրագիրներն ալ մնացած են անիրականալի:

Ընդհանուր պատերազմի ծագումը եւ քաղաքական դէպքերու դահալիժումը, թէեւ աղէտաբեր թըրքահայութեան համար, միեւնոյն ատեն ազատագրութեան գեղեցիկ հեռանկարը կը պարզէին:

Այդ օրերու մէջ համաձայնական տէրութեանց չուայլ խոստումները եւ Զարին՝ ի նպաստ հայոց, հրատարակած մանիֆէստը, անօրինակ խանդալառութիւն յառաջ բերած էին հայկական շրջանակներու մէջ: Թրքահայութիւնը՝ մատնուած արհաւիրքի եւ բնաջնջման վտանգի եւ արգելափակուած Թուրքիոյ սահմաններուն մէջ, օժանդակութիւն մը չկրցաւ ունենալ այդ օրերու ընդհանուր շարժման մէջ:

Բայց Կովկաս եւ արտասահման հնարաւոր միջոցներով օժանդակեցին Համաձայնական Տէրութեանց, անոնց յաղթանակին մէջ յուսալով գտնել ազգային դարաւոր բաղձանքներու իրականացումը:

Պր. Վրացեան կը գրէ. «Երկու միլիոննոց Ռուսահայութիւնը աւելի քան 250,000 զինուոր տուեց Ռուս բանակին»: (Հայաստանի Հանրապետութիւն, էջ 10): Այդ զինուորները Կովկասի շրջաններէն հեռու զանազան ճակատներ զրկուած էին:

Նոյնպէս կազմուած էին կամաւորական խումբեր՝ «Բաղաբալկան նպատակ ունենալով ինֆօրմիստիւն»



Հայաստանի Ռուսիոյ հօր հովանաւորութեան տակ» :
(Հայ. Հանրապետութիւն, էջ 9) :

Պատերազմի սկզբնական շրջանին Ռուսական բանակներու յաղթանակներու պատճառով գրաւուած էին մէկ քանի հայաբնակ նահանգներ եւ յանձնուած ուս պաշտօնատարներու վարչութեան :

Բայց ձարական կառավարութեան վերաբերումը հայոց հանդէպ հետզհետէ դարձաւ անբարեացակամ : Այս մասին Պր. Վրացեանի պատկերացումը շահեկան է, «Թրքահայկական նահանգների պարպումէն յետոյ հետզհետէ փոխուեց Ռուսների վերաբերումը դէպի հայերը, 1916 թուին այլեւս չէր լսուել հայկական ինքնավարութեան մասին» : (Հայ. Հանրապետութիւն, էջ 11) :

Որոշ էր որ «Հայաստան առանց հայու» Ռուսիոյ քաղաքական դաւանանքը դեռ ի զօրու էր :

Համաձայնական Տէրութեանց մեզ հանդէպ վերաբերումն ալ անկեղծ չէր եւ պետական յայտնի դէմքերու խաբեպատիր խոստումները պարզապէս անարդ շնականութիւն էին : Պր. Վրացեան այս մասին արդար զայրոյթով մը կը գրէ. «Մեծ պետութիւններ Հայաստանը բաժաներ էին իրենց մէջ, իբր պատերազմական աւար : Ինչ հեգնութիւն եւ ինչ շնութիւն» : «Հայ. Հանրապետութիւն, էջ 12) : «Այսպէսով քէ Ռուսաստանում եւ քէ արտասահման խաբուած եւ լքուած դաշնակիցներից, նմանը չտեսնուած տագնապով ոտք էինք դնում 1917 թուականին եւ ո՛վ գիտէ ինչ լինէր վախճանը եթէ վրայ չհասնէր հրաշքը» : (Հայ. Հանրապետութիւն, էջ 12) :

Այդ հրաշքը Ռուսական Փետրուարեան յեղափոխութիւնն էր : Քերենսքիի ժամանակաւոր իշխանութիւնը նպաստաւոր դիրք բռնեց ընդհանրապէս Անդրկովկասի, մասնաւորաբար Հայոց հանդէպ : Զանազան

ճակատներու վրայ ցրուած հայ ղինուորները արտօնուեցան կեղերոնանալ Հայաստանի մէջ : Թուրքերէ գրաւուած հայաբնակ նահանգներու մէջ հայերը ստացան տիրական դիրք :

Բայց Ռուս քաղաքական հոսանքներու հակընդէմ պայքարները, բանակի բարոյալքումը, եւ յետոյ Պոլշէվիկներու Պրէսթ-Լիթովսքիի մէջ Կեղը. կառավարութեանց հետ կնքած հաշտութեան առանձին դաշնագիրը, ամէն կարգ ու հաշիւ վերելալոր յեղաշրջեցին :

«Անդրկովկաս առաջին օրէն իսկ բացասական դիրք բռնեց խորհրդային իշխանութեան վերաբերմամբ եւ որոշեց ստեղծել տեղական իշխանութիւն, Անդրկովկասի Սէյմ եւ Անդրկովկասեան Կամիսերատ» : (Հայ. Հանրապետութիւն, էջ 38) :

«Պոլշէվիկները Անդրկովկասի վերաբերմամբ իրենց կնքած հաշտութեան դաշնագրով ընդունած էին Արտահանի, Կարսի եւ Պաթուրի անջատումը Ռուսաստանէ, ինքնորոշման ձեւի տակ» : (Հայ. Հանրապետութիւն, էջ 62) :

Սէյմը բողոքեց Պրէսթ-Լիթովսքիի հաշտութեան ժողովին, թէ առանց իր դիտութեան եւ մասնակցութեան կնքուած դաշնագիրը զուրկ է արժէքէ եւ թէ ինք որոշած է Թուրքիոյ հետ վերջնական հաշտութիւն կնքել :

Անդրկովկասի անջատ հաշտութիւն կնքելու վրտանդը կանխարգելիչու համար, Պօլշէվիկ կառավարութեան կողմէ Խարախան Սէյմի նախագահին հեռագիր ուղղեց թէ, Պրէսթ-Լիթովսքիի դաշնագրով արդէն դժուած են երկու տէրութեան սահմանները եւ Կարս, Արտահան եւ Պաթում պիտի անջատուին Ռուսիայէ ինքնորոշման ձեւի տակ :

Խարախանի հեռագիրը աննկատ կը մնայ Սէյմի կողմէ : Հաշտարար պատուիրակութիւն մը, որուն մէջ էին նաեւ Պր. Քաջազնունի եւ Պր. Խատիսեան, Փետր.

22ին կը մեկնի Տրապիզոն, Թուրք լիազօրներու հետ հաշտութեան բանակցութիւններ վարելու համար:

«Թուրք պատուիրակութեան պետ Ռէուֆ Պէյ պահանջեց որ բանակցութեանց սկսելուց առաջ Անդրկովկաս պէտք է յայտարարէ իր անկախութիւնը եւ կառավարական ձեւը»: (Ս. Վրացեանի Հայ. Հանրապետութիւն, էջ 65):

Այս պահանջումին մէջ Թուրքերը անտեղիտալի էին: Փետր. 25-ի դումարման մէջ Րէուֆ Պէյ իր պահանջները խտացուցած էր վերջնագրի մը մէջ. «48 ժամուայ ընթացքում տալ վերջնական պատասխան, այսինքն ընդունել Պրէս-Լիթովսիի դաշնագիրը եւ Անդրկովկասը յայտարարել անկախ»: (Ս. Վրաց. Հայ. Հանրապետութիւն, էջ 77):

Անդրկովկասի պատուիրակութիւնը հարկադրուած, իբր փոքրագոյն չարիք ընդունեց Պրէս-Լիթովսիի դաշնագիրը, եւ ըստ այնմ ալ հաղորդեց Րէուֆ Պէյի:

Երեք օր յետոյ Թուրք պատուիրակութեան կողմէ պատասխան ստացուեցաւ թէ «Անհրաժեշտ է ամենից առաջ Անդրկովկաս յայտարարէ իր անկախութիւնը»: (Ս. Վրաց. Հայ. Հանրապետութիւն, էջ 78):

Այս պահանջը կը մերժուի եւ Անդրկովկասի պատուիրակութիւնը ձեռնունայն կը վերադառնայ Թիֆլիս:

Պատերազմը արդէն իսկ վերսկսած էր: Սէյմը մարտաշունչ հրաւէր կ'ուղղէ Անդրկովկասի բովանդակ ընակչութեան հասարակաց թշնամույն դէմ կրողներու համար, «Սակայն այս ոգեւորութիւնը տեւեց շատ կարճ, հազիւ ծովի փրփուրի կեանք ունեցաւ: Դեռ նոր էին լռել ազմատենչ նառեր, երբ ստացուեց Պարսումի անկման լուրը»: (Հայ. Հանրապետութիւն, էջ 82):

Նոյնքան յուսահատական էր նաեւ հայոց դիրքը. պատերազմի ծանրութիւնը գրեթէ ամբողջութեամբ միակ հայերը կը տանէին: Թաթարներու բացասական, նոյն իսկ թշնամական վերաբերումը ծանօթ էր: Թուրքերը կը յառաջանային ամէն ուղղութեամբ. նախապէս գրաւուած հայաբնակ նահանգները հետզհետէ կ'անցնէին թշնամույն ձեռքը:

Այս յուսահատ դրութեան մէջ Անդրկովկաս թէեւ գիտակ Թուրքիոյ անկախութիւն հրատարակել տալու թաղուն նպատակին, հարկադրուեցաւ ընդունել: Չափազանց շահեկան է կարգաւ այդ նիստի նկարագրութիւնը Պր. Վրացեանի կողմէ գրուած. «Ուրիշ քանապարհ չկար, Սպրիլ 9-ին գումարուեց Անդրկովկասի անկախութեան յայտարարութեան հարցի համար: Մեռելատան էր նմանում այդ օր Սէյմի դահլիճը: Միակ հայերը չէին սգաւոր: Մենջեւիկները աշխատում էին հիմնաւորել Անդրկովկասի անկախութեան անհրաժեշտութիւնը: Ռուս Սեմեռնովի եւ սօց. յեղափոխական Լ. Թումանեանի համար դժուար չէր ջախջախել նրանց խախտու փաստերը եւ մերկացնել անկախութեան շարժառիթը: Մանաւանդ սպանիչ էր այս վերջինին նառը՝ «Չեզ համար պէտք է պարզ լինի, առում էր նա, որ Անդրկովկասի ներկայ պայմաններում անկախութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ դառնալ ստրակներ Թուրքիոյ»: (Հայ. Հանրապետ. էջ 85): «Իսկական աւզի մէջ էին հայերը: Սիրտ չկար խօսելու, եւ ի՛նչ խօսիլ: Նրանց ապրումները արտայայտեց Քաջագունին, յուզուած, մազերը ցրիւ, բարձրացաւ ամբիոն եւ կարդաց — Պարսնայք Սէյմի անդամներ, դաշնակցական փրաքցիան գիտակցելով այն մեծ պատասխանատուութեան, որ առնում է այս պատմական վայրկեանին, միանում է ինքնուրոյն Անդրկովկասեան պետութեան յայտարարութեան»: (Տես Հայ. Հանրապետութիւն, էջ 86):

Եւ այս եղերական պայմաններու տակ Անդրկովկաս՝ անջատուելով Ռուսական մեծ Միութենէն, կը հռչակէր իր անկախութիւնը:

Թուրք դիւանագիտութեան առաջին յաղթանակն էր այս:

Անդրկովկասի անկախ պետութեան կառավարական կազմին մէջ մտան հայոց կողմէ Խատիսեան, Ս. Սահակեան, Քաջաղնունի եւ Ա. Երզնկեան:

Նոր կառավարութեան առաջին գործը եղաւ իր անկախութիւնը հաղորդել Ռուսիոյ եւ բոլոր պետութեանց ու սկսիլ Թուրքիոյ հետ հաշտութեան բանակցութեան:

Պատերազմը արդէն կը շարունակուէր: Ռուսական բանակին կողմէ նախապէս գրաւուած հայաբնակ նահանգներու ժողովուրդը խուճապային փախուստով, անօրինակ թշուառութեան մէջ, կը դիմէր Ռուսական սահմանները, հալածուած Թուրք զօրքերէ եւ քիւրտ հրոսակներէ: Հայկական զօրամասերն իսկ կանոնաւոր նահանջի հնարաւորութիւն չունէին եւ հարկադրուած՝ քայլ առ քայլ կոտուելով կը յանձնէին որոշուած հողամասերը: «Այսպէս հայոց աշխարհը արեւան եւ կրակի մէջ էր»: (Ս. Վրց. Հայ. Հանրապետ. էջ 124):

Երկրի այս դժնդակ պայմաններուն մէջ է, որ անկախ Անդրկովկասի հաշտութեան պատգամաւորները, որոց մէջ էին Հայաստանի կողմէ՝ Խատիսեան, Քաջաղնունի եւ Պապաջանեան, Մայիս 5-ին կը մեկնէին Պաթում, Թուրքիոյ հետ հաշտութեան դաշինք կընքելու:

Տրապիզոնի մէջ առաջարկուած առաջին պայմանները ո՞րքան փոխուած էին: Անկախութեան հռչակումէն վերջ, Թուրքերը այլեւս գործ չունէին Ռուսիոյ հետ: Քայքայուած եւ բարոյալքուած Անդրկովկասը՝

նկուն եւ անպաշտպան, կը ներկայանար իրենց առաջ: Թաթարներու եւ Վրացիներու հետ Թուրքերը նախորոջ համաձայնած որոշած էին այդ միութիւնն ալ բաժնել երեք անկախ հանրապետութեանց, իբր դիւրատար որս իրենց սպազայ նուաճումներուն: Թուրքիոյ ներկայացուցիչը առանձին առանձին կը յանձնէր Վրացի, Հայ եւ Թաթար պատուիրակներու իրենց վերաբերեալ հաշտութեան պայմանները:

Շահեկան է այս մասին կարգալ Պր. Վրացեանի հետեւեալ տողերը. «Խալիլ Պէյի յանձնած հաշտութեան նախագիծը կը բաղկանար 13 յօդուածներից եւ 3 յաւելուածներից եւ սարսափելի ծանր պայմաններ էին պարունակում, ամբողջ Կովկասի, մանաւանդ Վրաստանի, բայց առաւել եւս Հայաստանի համար. Հայաստանից խլում էին Արեւմտադարձ, Կարս, Արեւմտադարձ—Ջուլֆա երկաթուղագիծը, Ախալքալաքը, Շիրակի եւ Էջմիածնի գաւառի մեծ մասը եւ Սուրմալուն: ՀԱՅԱՍՏԱՆ ՓԱՍՏՕՐԷՆ ԶԷՐ ՄՆՈՒՄ, հայերին քողնում էր հազիւ 11,000 քառ. վեատ լեռնոտ տարածութիւն Արագածի եւ Սեւան լճի միջեւ: Հողային պայմաններից գառ դրում էին եւ չափազանց ծանր տնտեսական, առեւտրական, ռազմագիտական եւ այլ պայմաններ: ... Էնվերների համխալմական ցրնորքները իրականութիւն էին դառնում...»: (Հայ. Հանրապետութիւն, էջ 95):

Ուշագրաւ է նաեւ Պր. Խատիսեանի այդ պատմական օրուան անցքերու նկարագրութիւնը գրուած «Մայիս 28»-ի մէջ, հրատարակութիւն Գաղնիկցութեան, Բարիզ: «Խալիլ Պէյ յանձնեց մեր նախագահին հաշտութեան պայմանները ամփոփուած պահարանի մէջ: Մե՛նք գնացի՛նք հիւրանոց եւ ծանօթացանք պայմաններից: Յիշում եմ լաւ քէ ինչպէս Քաջաղնունին եւ ես նայելով պայմաններին կցուած քարտէսին սարսափե-

ցանք: Ոչ միայն կարսը, այլև Ազեխանդրաբոլը եւ Սուրմալուն անցնում էին Թուրքերին, մեզ մնում էր մի փոքրիկ կտոր հող, հազիւ 11,000 ֆառ. Բիլումէքը: Պայմանները ստանալու օրից, Մայիս 11-ից սկսած մինչեւ Մայիս 27-ին անցաւ 16 օր, ինչե՛ր տեղի ունեցան այդ օրերի ընթացքին: Այդ օրերին նախապատրաստուեց կովկասի Միութեան քայքայումը եւ երեք անջատ հանրապետութեան կազմութիւնը»:

Հաշտութեան բանակցութիւնը ընդհատուեցան: Թուրքերոյ նախապայմանն էր որ հողային հսկայ դրաւուներէ անկախաբար, Հայ, Վրացի եւ Թաթար ազգաբնակչութիւնը յայտարարեն իրենց անկախութիւնը: Պատգամաւորները վերադարձան Հայաստան, Մայիս 26-ին գումարուեցաւ Ազգ. Խորհուրդ անկախութեան հռչակման որոշում տալու համար:

Թողունք որ Պր. Վրացեան խօսի. «Հայ գործիչները մէջ համաձայնութիւն չկար այդ օրերին, Ա. Ա. հարոնեան, Ստ. Մամիկոնեան, Տ. Տէր Մինասեան եւ սօսիալիստ յեղափոխականներ վնասակար կերպով դէմ էին արտայայտում անկախութեան:

«Այդ հարցում այ առաջին վնասակար խօսքը ասողը եղաւ Հ. Յ. Դաշնակցութիւնը»: (Հայ. Հանրապետութիւն, էջ 130):

Անկախութիւնը ընդունուած էր:

Լսենք դեռ Պր. Վրացեանի թանկագին վկայութիւնները. «Հայաստանի անկախութեան օրը իսկապէս պէտք է համարուէր Մայիս 30-ը: Հակառակ դրան համարում է Մայիս 28, այսինքն, այն օրը, երբ Ազգ. Խորհուրդը վնասեց հաշտութեան պատուիրակներ ուղարկել Պաքում: Անուղղակի կերպով, այսօրն էլ կարող է համարուել անկախութեան սկզբնաւորութիւն, որովհետեւ Թուրքերը հաշտութեան ՆԱԽԱՊԱՅՄԱՆ էին դրել ԱՆԿԱՍՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ: Ընդունելով քուրքերի ՊԱՅՄԱՆԸ՝ Ազգ. Խորհուրդը դրա-

նով իսկ հաստատած էր լինում անկախութեան փաստը»: (Հայ. Հանրապետութիւն, էջ 132):

Իսկ ամէնէն բարացուցական մասը Պր. Վրացեանի անձնական զնահատութիւնն է Մայիս 28-ի հռչակուած անկախութեան մասին. «Դեպքերը գահավէժ իրենք էին գալիս ստիպելու անել այն, ինչից մարդկային բանականութիւնը յամառօրէն աշխատում էր խուսափել»: (Հայ. Հանրապետութիւն, էջ 131):

Իսկ այդ անկախութեան արժէքի իսկական չափանիշը կը գտնենք Հ. Ազգ. Խորհուրդի նախագահ Ա. Սահակեանի Անկախ Հայաստանի անդրանիկ օրէնսդրական մարմնի առաջին նիստի բացման ճառին մէջ. «... Այսպիսով բազմակողմանի քննելով մի կողմից երկրի ուժերը եւ այն հանգամանքները, որոնց մէջ գտնուում է հայ ժողովուրդը, եւ միւս կողմից՝ ֆաղափական տնտեսութեան ստեղծուած դրութիւնը, հայոց Ազգային Խորհուրդը ՍԵՂՄԵՑ ԻՐ ՍԻՐՏԸ եւ անողոք գիտակցութեամբ որոշեց վերջնականապէս ընդունիլ (Թուրքիոյ) վերջնագիրը եւ փանաչել Հայաստանի անկախութիւնը, իրեն յանձնելով պատմութեան անաչառ դատաստանին»: (Հայ. Հանրապետութիւն, էջ 163):

Ահա Մայիս 28-ի անկախութեան իսկական արժէքը, եղերական պայմաններու տակ, Թուրքերու կողմէ պարտադրուած՝ եւ Սահակեանի զեղեցիկ բացատրութեամբ սիրտը սեղմուած, հռչակուած է: Եւ հեզնութիւնը հոն է որ ազգային ազատագրութեան սիրահար եւ հայ եղեռնի ողբերգու Աւետիս Ահարոնեան բուռն կերպով հակառակած է այդ անկախութեան հռչակման: Այլեւս ի՞նչ արժէք կը ներկայացնէ դաշնակցական թերթերու այն սնամէջ յոխորտանքը թէ՛ Մայիս 28ը մեր դարաւոր ստրկութեան խորտակման օրն է եւ թէ՛ Սարտարապատի հերոսական յաղթանակովն է որ Թուրքը պարտադրուած է ճանչնալու մեր ազատութիւնը:

Մինչդեռ Թուրքիոյ գեւալին ծրագրի յաջողութիւնն էր այդ անկախութիւնը, հայը մեկուսացած եւ անպաշտպան, իր մշտական գերին դարձնելու համար: Իսկ Սարտարապատի յաղթութենէն բոլորովին անգիտակ՝ մեր հաշտութեան բանազնացները արդէն իսկ ստորագրած եւ ընդունած էին Պաթումի դաշնագրին պայմանները.— Ա. Անկախութեան հռչակում եւ Բ. Հայաստանի գրեթէ ամբողջական յանձնում: Կ'արժէ կարգալ այս մասին Պր. Վրացեանի «Հայ. Հանրապետութեան» 117 էջ, Սարտարապատի գլուխը:

Քաղաքական այն դժնդակ պայմաններու տակ, ուր կը գտնուէր այդ օրերուն հայ ժողովուրդը, Թուրքիոյ սպառնալիքին տակ յուսարեկ, ոչ մէկ առարկութիւն ունինք այդ անկախութեան հռչակման դէմ: Բայց Մայիս 28-ը կուսակցական նկատումներով, ի հեճուկս արդի Խորհրդային Հայաստանի, իսկական ազատագրութեան օր ներկայացնել եւ մեծաշուք հանդէսներով տօնել եւ ցնծալ, ոչ միայն խարկանք է, այլ եւ հեղնութիւն այս ժողովուրդին ճակտին նետուած:

Նոյնպէս խարկանք մըն է հայ հանրապետութեան եռագոյն դրօշին ընծայել ազգային պատմական դրօշի մը հանդամանքը:

Բարիդի «Ապագայ» թերթին մէջ Պր. Ա. Չօպանեանի հրատարակած հմտալից ուսումնասիրութենէն վերջ՝ այլեւս նոր բան չի մնար ըսելու: Երբ այդ դրօշը՝ Պր. Վրացեանի իսկ վկայութեամբ, առաջին անգամ Հայաստանի Խորհուրդին կողմէ ընդունուած է անժամաքար, գոյներու ընտրութիւնը եւ դասաւորումը արդիւնք է Բուխարկութեան պատահականութեան, դոյներուն տրուած են քմածին մեկնութիւններ՝ կապայտը՝ Հայաստանի կապոյտ երկիւմբը, կարմիրը՝ հայ ժողովուրդին քափած արիւնը եւ նարնջի կամ ոսկույ գոյնը՝ խտացումը աշխատանքի, իսկ նարնջագոյնն ալ

Քաղաքացունիի գեղասիրական փառակին արդիւնքը, (տես Հայ. Հանրապետութիւն, էջ 160—161) այլեւս ո՛ր կը մնայ արժէքը այն պատմական տուեալներուն, որոնց վրայ կ'երգնուն դաշնակցական գրողները:

Եռագոյնի մասին՝ իբր խորհրդանշան ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի, ո՛չ մէկ յիշատակութիւն կայ Պր. Վրացեանի գործին մէջ, եւ այդ դրօշը առաջին անգամ ընդունող Հայաստանի Խորհրդի անդամներուն միտքէն իսկ չէ անցած:

Նոյնպէս անարժէք ամբոխավարութիւն մըն է ազատագրութեան համար թափուած հայ արիւնը նոյնացնել եռագոյնի հետ:

Այդ արիւնը թափուեցաւ դարերով սեփական հայրենիք մը ունենալու համար, եւ այդ հայրենիքն ալ ունինք այսօր: Ի՞նչ փոյթ թէ իր դրօշը եռագոյն է թէ միագոյն, կարմիր է թէ ճերմակ. բաւ է որ այդ դրօշը նորաստեղծ հայրենիքի սահմանները կ'ընծայէ ամբողջութեամբ, կ'ապահովէ հայ քաղաքացիներու կեանքն ու ազգային մշակոյթը եւ կ'արգիլէ կրկնութիւնը Կարսի անկումին նման նորանոր աղէտներու:

Այլեւս ոչ ոքի համար գաղտնիք մըն է թէ դադութներու մէջ, կարգախօսի մը համաձայն, Դաշնակցութեան կողմէ արուեստականօրէն ստեղծուած այս թոհուրոհը թափանցիկ հնարք մըն է արդի Խորհրդային Հայաստանը անսիրելի դարձնելու համար:

Այլապէս Հայաստան անկախ է թէ կախեալ, նուազ չափով կը հետաքրքրէ Դաշնակցութիւնը, որ իբր պատեհապաշտ կուսակցութիւն մը, դիտէ իր սեփական շահերուն համաձայն եղբայրակցիլ ոչ թէ միայն քիւրտերու հետ, այլ եւ... սատանային:

1908ին հռչակուած Օսմ. Սահմանադրութեան շըրջանին Դաշնակցութիւնը դոհացած էր պարզ Օսմանեան

ազատ քաղաքացի ըլլալու նուազագոյն չափովն իսկ : Այս մասին թող դարձեալ խօսի Պր. Վրացեան. «Նրե- սուն տարիների յեղափոխական մաքառումներէց յե- տոյ, հայը անվերապահ կերպով դառնում էր Օսմանե- եան քաղաքացի, հաւատարիմ տարր Օսմանեան «վե- րածնող Հայրենիքի» : (Հայ Հանրապետութիւն, էջ 3) :

Եւ հիմա, այս պարոններն են որ այսօր, երբ Հա- յաստան քաղաքական գերազօր դէպքերու մղմամբ դասակարգուած է Պորհրդային Միութեան շարքին մէջ եւ փրկուած անվրէպ քայքայումէ, աններելի ա- տեցողութեամբ եւ ուխտեալ հակառակութեամբ ան- սիրտ պայքար մը կը մղեն անոր դէմ պարզապէս «ա- նելիք» ունենալու համար :

Դաշնակցութիւնը՝ իբր քաղաքական կաղմակեր- պութիւն, ազատ է իր ուղածը ընելու, օր մը անշուշտ իր շարքերը սթափած, պիտի կասեցնեն այս խօլական վազքը :

Բայց մենք չենք ներեր որ արդի Հայաստանը վար- կաբեկող եւ նսեմացնող իր ցոյցերուն եւ ձեռնարկնե- րուն, ազգին հաւաքականութեան կողմէ կատարուած ըլլալու երեւոյթը տայ :

Դաշնակցութեան համար արդի Հայաստանը դը- ժոխք մըն է, իր վարիչները զուրկ են հայու զգացումէ եւ հոգիէ, կատարուած վերաշինական աշխատանքնե- րը ոչինչ կ'արժեն : Դեռ մէկ քանի ամիս առաջ, Պր. Աւետիս Ահարոնեան «Հայրենիք»ի մէջ կը գրէր. «Հայ ժողովուրդը մերժելով կը մերժէ խորհրդային վար- չածեր» :

Այս խօսքերը հայ ժողովուրդին հարազատ զգաց- ման եւ մտածման արտայայտութիւնը չեն :

Հայ ժողովուրդը, դառն յուսախարութիւններէ վերջ, գիտէ թէ՛ քաղաքական արդի պայմաններու մէջ, Հայաստանի գոյութիւնը, միակ եւ միակ խոր-

հրդային վարչաձեւով ապահովուած է. հաստատ դի- տէ թէ ուրիշ ինչ ձեւի տակ ալ գտնուի, պիտի են- թարկուի թուրքիոյ ազդեցութեան եւ մշտակայ գե- րութեան :

Ահա թէ ինչո՞ւ թուրքերը պահանջեցին որ Հա- յաստան դադրի Պորհրդային Միութեան մաս կաղմե- լէ, եւ համաձայն Աղեքսանդրաբօլի դաշնադրին, ըլ- լայ անկախ հանրապետութիւն :

Այս հիմնական տեսակէտներն են որ մեզ խրամա- տով մը կը բաժնեն Դաշնակցութենէն, եւ մենք անշեղ կերպով կը մնանք հաւատարիմ արդի Հայաստանի :

Դաշնակցութիւնը՝ իբր սիոփանք, թող իր հա- ւաքոյթներուն մէջ պարզէ եռագոյն դրօշը եւ անոր շուքին տակ լալազին երգէ «Մեր հայրենիք թշուառ ան- տէր, մեր թշնամեաց ոտնակոխ» :

Այդ երգը օրհասական կարապի լալիւնն է եւ կ'ո- գեկոչէ Հայաստանի երէկը եւ ոչ թէ վերածնող արդի Պորհրդային Հայաստանի փառաշուք ԱՅՍՕՐԸ :



ՆՈՐ ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՄԷԼԻՔԻ ԱՂՋԻԿԸ

ԼԷՕ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

Թղթակազմ \$1.25

Գին՝

Լաքակազմ \$1.75

Դիմել՝

«ՊԱՅԲԱՐ»Ի ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

296½ Shawmut Ave., Boston



2191-2002

Հայաստանի Ազգային գրադարան



NL0428085

9100